ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

N 01/19

ք. Եղեգնաձոր «25» հունվարի 2019թ

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և << Երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ը ի դեմս, տնօրեն Ա.Կարապետյանի որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2018թ թիվ 1515-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին է հատկացնում 10035.2 հազ. / տաս մլն երեսունհինգ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված նպատակների իրականացման համար՝ ազգային ,փողային և լարային նվագարանների բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցում՝ 43 սովորողի համար / ամսեկան 19448 ՀՀ դրամ/ :

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի հաշվարկային հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան ք.Եղեգնաձոր, Շահումյան 5 ՀՀ Ֆինանսական գործ.վարչ. Հ/Հ 900351082020 հվհհ 08907717 /ստորագրություն/ Գլխավոր քարտուղար Կ.Սահակյան	Եղեգնաձորի երաժշտական դպրոց ՊՈԱԿ հասցե՝ ք. Եղեգնաձոր , Շահումյան 9 ՀՀ Ֆինանսական գործ վարչ. Հ/Հ 900358000314 հվհհ ~~08906277~~ 08900631 /ստորագրություն/ Տնօրեն՝ Ա.Կարապետյան